# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.08.2021թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/234**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13355-2021 գրությամբ «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.08.2021թ. թիվ 02/02.4/11888-21 գրության հիման վրա, 23.08.2021թ. թիվ 26/26-1/13355-2021 գրությամբ նախաձեռնել է «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/234 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Գյումրի համայնքի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2021թ. թիվ 02/02.4/11888-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՇՄ «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի» ՀԿՀ-ի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակում Գյումրի քաղաքի ֆոտովոլտային կայանների կառուցման աշխատանքների ձեռքբերման «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-37/21» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող մասնակից «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է պատվիրատուին՝ Գյումրու համայնքապետարանին, որ հրաժարվում է կնքել պայմանագիր՝ որակավորման ապահովման տրամադրման հետ կապված խնդիր ունենալու պատճառով: Ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի, մասնակիցը որպես ընտրված և պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակից, ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/234 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/234 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/234 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-37/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ գների նվազեցման նպատակով հրավիրվել է միաժամանակյա բանակցություններ:

3. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն օգոստոսի 12-ի գրությամբ հրաժարվել է պայմանագիրը ստորագրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողողը որոշում է կայացրել հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը՝ մերժել «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ի հայտը և պայմանագիր կնքելու առաջարկ ուղարկել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

## 5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13355-2021 գրությունը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի 17.08.2021թ. թիվ 02/02.4/11888-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ***<u>ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը</u>*** հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

(...)

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին***՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ***ընտրված մասնակիցը*** պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

(...)

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում ***հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:***

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը:

Եվ այսպես, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-37/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ գների նվազեցման նպատակով հրավիրվել է միաժամանակյա բանակցություններ:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն օգոստոսի 12-ի գրությամբ հրաժարվել է պայմանագիրը ստորագրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողողը որոշում է կայացրել հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը՝ մերժել «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ի հայտը և պայմանագիր կնքելու առաջարկ ուղարկել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի գործողությունների հաջորդականությունն, ինչն իր հերթին հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական

ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված մասնակիցներին, որից հետո նոր միայն վերջինիս որպես ընտրված մասնակից ծանուցում և ուղարկում է պայմանագիր կնքելու առաջարկը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ գործում առկա փաստերի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ առանց «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու, 13.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը հրաժարվել է պայմանագիրը ստորագրել և որոշում է կայացրել մերժել Ընկերության հայտը և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե ***<u>ընտրված մասնակիցը</u> չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Վերը նշված իրավակարգավորումը հստակ ցույց է տալիս, որ գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում է դիտարկվում երբ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն չի ճանաչվել ընտրված մասնակից, որպիսի պայմաններում Ընկերությունը չի կրում որպես ընտրված մասնակից որոշակի գործողություններ իրականացնելու, այդ թվում նաև՝ որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորություն, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները չեն կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13355-2021 գրությամբ «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**